

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2009

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոպական և Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եվրոպական քաղաքական, տնտեսական և հասարակական կառույցներին ու հաստատություններին հետագա ինտեգրումն է: Հայաստանը նաև մտադիր է աշխուժացնել գործնական և քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ Դաշինքին ավելի մերձենալու նպատակով: Այս առնչությամբ կարևոր գործիքներ կհանդիսանան Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ), Պլանավորման և վերանայման գործընթացը, ինչպես նաև Դաշնակիցների հետ խորհրդակցությունները:

1.2. Հարաբերություններ հարևանների հետ

Հայաստանը ցանկանում է նպաստել Կովկասում տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը և հաստատական է կառուցողական աշխատանք տանել իր հարևանների հետ հարաբերությունների զարգացման և բարելավման ուղղությամբ: Հայաստանը հանձնառու է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը և լիովին աջակցում է այդ խնդրում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին: Հայաստանը ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը և հաստատական է հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսությանը, ներառյալ այդ նպատակով ուղղակի բանակցություններին:

1.3. Ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, պայքար կոռուպցիայի դեմ և մարդու իրավունքներ

Հայաստանը հաստատական է հետագա առաջընթաց ապահովելու ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, թափանցիկության, մամուլի ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Հայաստանը մտադիր է ամրապնդել ժողովրդավարական հաստատություններն ու գործընթացները՝ միջազգայնորեն ճանաչված չափանիշներին լիովին համապատասխանելու նպատակով: Այդ նպատակով Հայաստանը Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական Միության, ԵԱՀԿ և այլ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ հետամուտ է լինելու քաղաքական, դատական, ընտրական բարեփոխումների համապարփակ փաթեթի իրագործմանը: Հայաստանը գիտակցում է, որ առաջընթացը կախված է բարեփոխումների արդյունավետ իրագործումից և այդ իմաստով հաստատական է ակտիվացնել իր ջանքերը: Հայաստանը նույնպես գիտակցում է երկրում տարբեր քաղաքական ուժերի միջև կառուցողական երկխոսության խթանման անհրաժեշտությունը: Հայաստանը հաստատական է

կոռուպցիայի դեմ պայքարում և մտադիր է գործնական միջոցներ նախաձեռնել՝ թափանցիկ և լայն հիմքերով պատասխանատվության մեխանիզմների հաստատման ուղղությամբ, կատարելագործել պետական պաշտոնյաների ուսուցումն ու իրազեկումը, և հակակոռուպցիոն օրենքների հարկադրումը:

1.4. Պաշտպանության և անվտանգության ոլորտների ժողովրդավարական վերահսկողություն, զինվորական արդարադատություն, մարդու իրավունքները Ձիևված ուժերում

Հայաստանը մտադիր է զարգացնել և ամրապնդել Ձիևված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը: Հայաստանը նույնպես մտադիր է նպաստել քաղաքացիական մասնակցությանը պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում: Այդ առումով Հայաստանը հատկապես կարևորում է պաշտպանության և անվտանգության հարցերում քաղաքացիական հասարակության ընդգրկման քաջալերումը, ինչպես նաև խորհրդարանականների և նրանց անձնակազմերի կրթության և ուսուցման բարելավումը: Հայաստանը նույնպես հաստատական է ապահովելու սահմանադրական և մարդու իրավունքների պաշտպանությունը Ձիևված ՌԺժերում և աշխատանքներ է իրականացնելու կրթությունը բարելավելու, մարդու իրավունքներով զբաղվող անկախ մարմիններն ուժեղացնելու, կարգապահական կանոնադրությունը սահմանադրական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

1.5. Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ, կիբեր-պաշտպանություն

Հայաստանը հաստատական է հզորացնել ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իր կարողությունները: Հայաստանը, նաև մտադիր է հզորացնել իր կարողությունները ահաբեկչության և կազմակերպված հանցավորության առաջացրած հետևանքների կառավարման նպատակով: Հիմնվելով այս բնագավառում ՆԱՏՕ-ի հետ առկա համագործակցության վրա՝ Հայաստանը պատրաստ է ավելի ակտիվորեն ներգրավվել համապատասխան ծրագրերի և միջոցառումների, հատկապես Ահաբեկչության դեմ պայքարի գործընկերության գործողության ծրագրի, ներառյալ համապատասխան հետախուզական տեղեկատվության փոխանակումը, իրականացման գործընթացում: Հայաստանը մտադիր է նաև հետագա օրենսդրական ու գործնական միջոցներ ձեռնարկել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կիբեր հարձակումներից կապի և տեղեկատվական կարևոր համակարգերի պաշտպանության բարելավման գործում:

1.6. Տնտեսական զարգացում

Հայաստանը ձգտում է առողջ, կայուն և տևական տնտեսական զարգացմանը: Հայաստանի առաջնահերթությունների շարքում են եվրոպական չափանիշների համաձայն թափանցիկ շուկայական տնտեսվարումը, տրանսպորտային ենթակառուցվածքների և արտաքին տրանսպորտային կապերի զարգացումն ու զանազանեցումը, հուսալի և տարաբնույթ էներգետիկ պաշարների ապահովումը, օտարերկրյա ներդրումների խրախուսումը, , պետական ֆինանսական ռեսուրսների և (կամ) օտարերկրյա օգնության ոչ նպատակային օգտագործման կանխումը:

1.7. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Հետամուտ լինելով Եվրոպական կառույցներին ու հաստատություններին ինտեգրմանը, Հայաստանը նպատակ ունի ավելի ընդլայնել իր համագործակցությունը Եվրոպական Միության հետ և ձգտում է առավել սերտ ինստիտուցիոնալ համատեղելիության՝ լիարժեք անդամակցումն այդ կառույցին համարելով վերջնական նպատակ:

Հայաստանը կշարունակի համագործակցել նաև ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ և հաստատական է այս կազմակերպությունների համապատասխան չափանիշները կիրառելու գործում: Հայաստանը գիտակցում է երկրում գործող տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կրկնակումը նվազեցնելու անհրաժեշտությունը:

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2.1 Պաշտպանական և անվտանգության համակարգի բարեփոխում

Հիմնվելով սպառնալիքի նորացված գնահատման վրա, Հայաստանը մտադիր է իրականացնել պաշտպանության ռազմավարական լիակատար վերանայում, ինչը կապահովի ուղեցույցեր անվտանգության և պաշտպանության բնագավառում հետագա բարեփոխումների համար: Ի թիվս այլոց պաշտպանական և անվտանգության բարեփոխման նպատակների իրագործմանն աջակցող կարևոր լրացուցիչ գործիքներ են հանդիսանում Պլանավորման և վերանայման գործընթացն /ՊՎԳ/ և Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ): Ազգային անվտանգության քաղաքականության և դրան առնչվող փաստաթղթերի մշակման համատեքստում Հայաստանը մտադիր է սպառնալիքի նորացված գնահատման եզրակացություններին համապատասխան վերանայել ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերը:

2.2. Պաշտպանական պլանավորում

Հայաստանը մտադիր է բարձրացնել պաշտպանական պլանավորման և բյուջետային համակարգի արդյունավետությունը, և մշակել ֆինանսական առումով մատչելի, թափանցիկ և կայուն պաշտպանական ծրագրեր: Հայաստանը նույնպես նպատակ ունի զարգացնել փորձագիտական համակարգը այդ ոլորտներում՝ ապագա Պաշտպանության ռազմավարական վերանայման մշակմանն ու իրագործմանը, ինչպես նաև հրամանատարական-վերահսկողական, հանդերձանքի և թիկունքային ապահովման ոլորտներում բարելավումների գործընթացին աջակցելու նպատակով: Հայաստանը նույնպես մտադիր է վերանայել իր պաշտպանությանն առնչվող արդյունաբերությունը և արտադրությունը և առաջարկություններ մշակել դրա ապագա գործածման վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունը մեծացնում է քաղաքացիական անձանց թիվը Պաշտպանության նախարարությունում և շարունակելու է վերանայել Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի Գլխավոր շտաբի զինվորական և քաղաքացիական անձնակազմի կառավարման համակարգը:

2.3. Ռազմական վարժանքի և փոխգործունակության խնդիրներ

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան խաղաղապահ բրիգադի կազմավորումը և մտադիր է Օպերատիվ կարողությունների հայեցակարգի շրջանակներում գնահատել այդ բրիգադի զորամասերը՝ դարձնելով դրանք փոխգործակցող և ունակ իրենց ներդրումն ապահովելու ՆԱՏՕ-ի ղեկավարած Գ-ՀՆ գործողություններին: Հայաստանը նույնպես մտադիր է ամբողջությամբ վերանայել իր ռազմական կրթությունը և բոլոր զորատեսակների համար նախատեսված վարժանքների ծրագրերը, ինչպես նաև մշակել համապատասխան նոր դասընթացներ կրթսեր և ավագ սպաների համար:

2.4. Սահմանային անվտանգություն

Հայաստանը մտադիր է վերանայել սահմանային անվտանգության ներկայիս պրակտիկան և ընթացակարգերը՝ սահմանային անվտանգության բարելավման

նպատակով: Այդ վերանայման միջոցով կորոշվեն նաև առաջնային նշանակություն ունեցող սարքավորման կարիզները:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Հասարակության իրազեկում

Հայաստանը մտադիր է ընդլայնել ՆԱՏՕ-ի, ՆԱՏՕ-ի Գործընկերության ծրագրի, ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի ներգրավվածության և համագործակցության վերաբերյալ հասարակական իրազեկումը: Հայաստանը նաև նպատակադրվել է ընդլայնել հասարակական իրազեկումը ի աջակցություն պաշտպանական և անվտանգության ոլորտի բարեփոխումների: Երևանում ՆԱՏՕ-ի մասին տեղեկատվական կենտրոնը շարունակելու է կարևոր գործիք հանդիսանալ այդ գործում և Հայաստանը կշարունակի աջակցել կենտրոնին:

3.2. Գիտություն

Հայաստանը նպաստելու է Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության ու համագործակցության հաստատմանը՝ մասնակցելով «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրին:

3.3. Պատրաստվածություն քաղաքացիական արտակարգ իրավիճակներին

Հայաստանը հաստատական է բարելավել ճգնաժամերի կառավարման և համակարգման իր ունակությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը՝ աղետներին և ասիմետրիկ սպառնալիքներին դիմակայելու նպատակով: 2008թ-ին ստեղծվեց Արտակարգ իրավիճակների նախարարությունը, և ներկայումս աշխատանք է տարվում ճգնաժամերի կառավարման միջգերատեսչական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Հայաստանը նպատակադրվել է մեծացնել սեփական կարողությունները և ընդլայնել կապերը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համադրման Եվրատլանտյան կենտրոնի հետ՝ աղետների հաղթահարման միջազգային գործողություններում իր ներդրումն ունենալու նպատակով:

4. ՎԱՐՉԱԿԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

4.1 Վարչական խնդիրներ

Հայաստանը կապահովի համադրում և կապի հետ կապված բոլոր անհրաժեշտ կարգավորումները այս Գործողության ծրագրի արդյունավետ իրագործման համար:

4.2 Պաշտպանողական անվտանգություն

Հայաստանը հաստատական է շարունակելու ՆԱՏՕ-ի հետ առկա Անվտանգության համաձայնագրի լիակատար իրագործումը:

4.3 Ռեսուրսներին առնչվող խնդիրներ

Հայաստանը մտադիր է անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել՝ այս Գործողության ծրագրով նախատեսված ծրագրերի ու գործողությունների իրականացմանը համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Գլուխ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոպական և Եվրատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.1.1.	Ընդլայնել և խորացնել համագործակցությունը Եվրատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ
Գործող. 1.	Որպես ԱԳԳԾ գործընթացի մաս՝ դաշնակիցների հետ իրականացնել 26+1 ձևաչափով քաղաքական կանոնավոր խորհրդակցություններ՝ անվտանգությանը և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներին առնչվող խնդիրների շուրջ:

1.2. Հարաբերություններ հարևանների հետ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.2.1.	Նպաստել տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը Կովկասում
Գործող. 1	ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում աշխատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ և Դաշնակիցներին տեղեկացնել զարգացումների մասին:
Գործող 2	Հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսության:

1.3. Ժողովրդավարական բարեփոխումներ, օրենքի գերիշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ, մարդու իրավունքներին առնչվող ընդհանուր խնդիրներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.3.1.	Ընտրական տեխնոլոգիաներ/Ընտրական բարեփոխումներ

Գործող. 1	Իրականացնել ընտրական գործընթացների կառավարման, ընտրողների գրանցման գործընթացի, ընտրարշավի և ընտրարշավի ֆինանսավորման կանոնների հետագա բարելավումը՝ հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջարկությունները և ապահովել ընտրական օրենսդրության արդյունավետ և անկողմնակալ իրագործումը:
Գործող. 2	Վերանայել ընտրությունների բողոքարկմանն առնչվող օրենսդրությունը՝ հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջարկությունները և ապահովել բողոքարկման բարեփոխված ընթացակարգերի արդյունավետ և անկողմնակալ իրագործումը:
Գործող. 3	Ապահովել զինձառայող քվեարկողների համապարփակ ուսուցումը, ներառյալ քվեարկելու կամ չքվեարկելու միջև ընտրություն կատարելու իրենց իրավունքի լուսաբանումը և գործնականում ապահովել այդ իրավունքների հարգումը:
1.3.2.	Դատավորների անկախություն
Գործող. 1	Արդյունավետ կերպով արձագանքել 2008թ. մարտի 1- 2-ի իրադարձությունների հետ կապված ազատագրկման ենթարկված անձանց իրավիճակին՝ հաշվի առնելով ԵԽԽՎ 1609 (2008) ,1620 (2008) , և 1643 (2009) բանաձևերում արտահայտված մտահոգություններն ու առաջարկությունները:
Գործող. 2	Կատարելագործել դատավորների և դատական կատարածուների ուսուցումն ու որակավորումը՝ ներառյալ Դատավորների դպրոցի հետագա զարգացման միջոցով:
Գործող. 3	Կատարելագործել դատավորների ընտրության գործընթացը և նշանակման ընթացակարգերը՝ անկախ և որակյալ դատավորների նշանակումը ապահովելու նպատակով:
Գործող. 4	Կատարելագործել դատախազների հավաքագրման, նշանակման և ուսուցման՝ ներառյալ նախնական և շարունակվող մասնագիտական զարգացումը, գործող համակարգը:
Գործող. 5	Բարելավել արդարադատության հասանելիությունը բնակչության համար, ապահովել դրա անվճար կամ մատչելի լինելը հատկապես սոցիալապես խոցելի խմբերի համար, ներառյալ իրավական օգնության համակարգի բարեփոխման միջոցով:
1.3.3	Մամուլի ազատություն
Գործող. 1	Ապահովել մամուլի անկախությունը լիցենզավորման և հանրային հեռարձակման կարգավորիչ մարմինների քաղաքական շահերից՝ համաձայն ԵԽ առաջարկությունների, ինչպես նաև ապահովել հանրային հեռարձակման միջոցների լիցենզավորման ընթացակարգերի արդյունավետ իրագործումը:
Գործող. 2	Նպաստել հեռարձակվող լրատվամիջոցների անկախությանը, բազմակարծությանը և որակի հետագա բարելավմանն ուղղված միջոցներին:
Գործող. 3	Բարձրացնել պետական իշխանության ներկայացուցիչների իրազեկությունը (դատավորներ, դատախազներ և հեռարձակման

	կարգավորիչ մարմնի աշխատակազմ) ազատ կամարտահայտության, տեղեկացվածության ու ՁԼՄ իրավունքներին առնչվող ԵՆ նորմերի վերաբերյալ:
Գործող. 4	Ապահովել ՁԼՄ-ների կողմից իրավական պարտավորությունների կատարումը՝ կապված պետական պաշտոնի համար մրցող թեկնածուների հանդեպ հավասար մոտեցում կիրառելու հետ:
1.3.4.	Հանրահավաքների ազատություն
Գործող. 1	Ապահովել բոլոր քաղաքացիների հանրահավաքների ազատության իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն:
1.3.5	Պայքար կոռուպցիայի դեմ
Գործող. 1	Ուժեղացնել կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի միջոցները՝ ԳՐԵԿՈ-ի և Մանիլայի առաջարկների համաձայն:
Գործող. 2	Ամրապնդել հակակոռուպցիոն օրենսդրության արդյունավետ և անկողմնակալ կիրարկումը:
Գործող. 3	Բարելավել կոռուպցիայի մասին իրազեկումը պետական պաշտոնյաների ուսուցման և կրթության ընդլայնման միջոցով
1.3.6.	Մարդու իրավունքների մասին օրենսդրությունը և սահմանված կարգը
Գործող. 1	Ապահովել ազգային մակարդակով Մարդու իրավունքների Եվրոպական Գատարանի որոշումների լիարժեք իրագործումը՝ ներառյալ դատավորների, դատախազների և մարդու իրավունքներով զբաղվող պաշտոնյաների իրազեկման և գործնական կարողությունների բարձրացման միջոցով:
Գործող. 2	Նպաստել մարդու իրավունքներով զբաղվող անկախ, ոչ դատական մարմինների և կազմակերպությունների ակտիվ համակարգի զարգացմանը:
Գործող. 3	Մարդու իրավունքների պաշտպանի կարողությունների ուժեղացում:
1.4.	Պաշտպանության և անվտանգության ոլորտների ժողովրդավարական վերահսկողություն, զինվորական արդարադատություն, մարդու իրավունքները Ձինված ուժերում
Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.4.1.	Մշակել պաշտպանական և անվտանգության բնագավառների օրենսդրական և դատական արդյունավետ ու թափանցիկ

	վերահսկողություն
Գործող. 1	Հնարավորինս բարձրացնել օրենսդրական մարմնի դերը պաշտպանական գործողությունների վերահսկման գործում՝ բարելավելով Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, Ֆինանսավարկային, Բյուջետային և Տնտեսական հարցերով խորհրդարանական մշտական հանձնաժողովների կարողություններն ու գործունեությունը:
Գործող. 2	Քայլեր նախաձեռնել խորհրդարանականների և նրանց անձնակազմերի պաշտպանական գործողությունների վերահսկմանը վերաբերող հատուկ կրթության և ուսուցման կատարելագործման ուղղությամբ:
Գործող. 3	Վերանայել ներկայիս զինվորական կարգապահության կանոնակարգը և ապահովել կարգապահական կանոնադրության լիակատար համապատասխանությունը Հայաստանի Սահմանադրությանը և միջազգայնորեն ճանաչված նորմերին և չափանիշներին:
1.4.2.	Չարգացնել արդյունավետ և թափանցիկ միջոցներ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության ապահովման նպատակով, նպաստել քաղաքացիական հանրության մասնակցությանը պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում, ոչ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը և հանրության համար պաշտպանական և անվտանգության ոլորտի տեղեկատվության պատշաճ հասանելիությունը ապահովող միջոցներին
Գործող. 1	Պաշտպանության նախարարությունում և անվտանգության ոլորտի այլ նախարարություններում և հիմնարկներում ապահովել քաղաքացիական և զինվորական անձնակազմերի՝ ներառյալ բարձր պաշտոններում բավարար ներկայություն:
Գործող. 2	Ապահովել պետության գործելակերպի առավելագույն թափանցիկությունը պաշտպանական քաղաքականության, պաշտպանության բյուջեի և զինված ուժերում մարդու իրավունքի պաշտպանության հարցերում:
Գործող. 3	Խրախուսել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը պաշտպանության և անվտանգության խնդիրներում:
1.4.3	Չարգացնել մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունները կապված ռազմական և անվտանգության ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության հետ
Գործող. 1	Ընդլայնել համագործակցությունն ու փորձի փոխանակումը ՆԱՏՕ-ի և Գործընկեր երկրների զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների համար պատասխանատու մարմինների հետ:
Գործող. 2	Համապատասխան կրթական ծրագրերի ստեղծում և իրագործում՝ իրենց իրավունքների և պարտականությունների և վերականգնման եղանակների մասին բոլոր զինծառայողների լիարժեք տեղեկացվածության ապահովման նպատակով՝ ներառյալ Մարդու իրավունքների պաշտպանի միջոցով, եթե առկա է մարդու իրավունքների ոսնահարումը:
1.5	Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ, կիրառելի պաշտպանություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.5.1	Բարձրացնել ահաբեկչության դեմ պայքարի Հայաստանի կարողությունները
Գործող. 1	Բարելավել միջգերատեսչական համագործակցությունը ահաբեկչության դեմ պայքարի հարցում:
Գործող. 2	Բարձրացնել ասահաբեկչության դեմ պայքարի և ահաբեկչության հետևանքների կառավարման ազգային կարողությունները:
Գործող. 3	Կենսագործել միջազգային հակաահաբեկչական կոնվենցիաները և միջազգային այլ համապատասխան իրավական փաստաթղթերը:
1.5.2	Նպաստել Ահաբեկչության դեմ պայքարի Գործընկերության գործողության ծրագրի շրջանակներում իրականացվող ԵԱԳԽ հակաահաբեկչական միջոցառումների իրականացմանը
Գործող. 1	Պահպանել կապը և իրականացնել տեղեկատվության փոխանակում ՆԱՏՕ-ի հետ Կապի հետախուզական միավորի/ԿՀՄ/ միջոցով:
Գործող. 2	Մեծացնել Հայաստանի գիտական շրջանակների և փորձագիտական խմբերի ներդրումը ահաբեկչության դեմ պայքարին՝ համագործակցելով Գ-խտություն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակներում:
1.5.3	Բարձրացնել կարևոր նշանակության կապի և տեղեկատվական համակարգերը կիրառելի հարձակումներից պաշտպանելու Հայաստանի կարողությունները՝ ներառյալ միջազգային համագործակցությանը նպաստելու միջոցով
Գործող. 1	Ինտեգրել համակարգիչների հետ կապված արտակարգ իրավիճակների արձագանքման Հայաստանի թիմը ճգնաժամերի կառավարման ազգային համակարգի մեջ և բարձրացնել համապատասխան միջազգային համագործակցությանն աջակցելու դրա կարողությունը:
Գործող. 2	Բարձրացնել քաղաքացիական հաղորդակցության ենթակառուցվածքների դեմ կիրառելի հարձակումների և տեղեկատվական պատերազմի հետևանքները կառավարելու կարողությունները:
Գործող. 3	Ներդաշնակեցնել ազգային օրենսդրությունը կիրառելի արձագանքման առնչվող միջազգային իրավական նորմերի հետ:
Գործող. 4	Կատարելագործել համապատասխան անձնակազմի կրթությունն ու ուսուցումը:
Գործող. 5	Հաստատել հասարակության պետական և մասնավոր հատվածների գործընկերություն՝ կիրառելի հարձակումներից արձագանքելու և կանխարգելելու ջանքերին աջակցելու նպատակով:
1.5.4	Շարունակել զարգացնել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ օրենսդրությունը
Գործող. 1	Ձեռնարկել հետագա գործողություններ փողերի լվացման դեմ օրենսդրությունը և կարողությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Գործող. 2	ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1378 բանաձևի համաձայն ձեռնարկել գործնական քայլեր ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ուղղությամբ:
1.55	Ընդլայնել Հայաստանի կարողությունները մարդկանց շահագործման /տրաֆիկինգի/ և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում

Գործող. 1	Կատարելագործել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ իրագործումը:
Գործող. 2	Կատարելագործել մարդկանց շահագործման/տրաֆիկինգի/ դեմ պայքարի Գործողությունների ծրագիրը ՄԱԿ-ի անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և Եվրոպայի Խորհրդի մարդկանց շահագործման/տրաֆիկինգի/ դեմ կոնվենցիաների համաձայն:
Գործող. 3	Խաղաղապահ ուժերի համար մշակել տրաֆիկինգի դեմ պայքարի և դրանում նրանց դերի և պարտականությունների մասին կրթական ծրագիր՝ հաշվի առնելով ՆԱՏՕ/ԵԱԳԽ մարդկանց շահագործման/տրաֆիկինգի/ դեմ պայքարի քաղաքականությունը:

1.6 Տնտեսական զարգացում և քաղաքականության առաջնահերթություններ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.6.1	Նպաստել կայուն, հուսալի և կենսունակ տնտեսության զարգացմանը
Գործող. 1	Աշխատել Եվրոպական միության հետ «շուկայական տնտեսության» կարգավիճակի ձեռքբերման ուղղությամբ:
Գործող. 2	Կանխել պետական ֆինանսական ռեսուրսների անհարկի օգտագործումը, ներառյալ պաշտոնական դիրքի չարաշահումը:
Գործող. 3	Հարկային և մաքսային վարչարարության արդյունավետ բարեփոխումների միջոցով ստեղծել նպաստավոր գործարար միջավայր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելի մեծ ծավալներ ապահովելու նպատակով:
Գործող. 4	Տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին մասնակցության միջոցով ձգտել էներգետիկ ռեսուրսների հասանելիությանը:
Գործող. 5	Էներգիայի մատակարարումների ալյուրտրանքային աղբյուրների ապահովում և էներգիայի նորացված աղբյուրների հետագա զարգացում:
Գործող. 6	Հետամուտ լինել Հարավային Կովկասի տրանսպորտային ուղիների բացմանը և լիարժեք շահագործմանը:
Գործող. 7	Ապահովել օտարերկրյա տնտեսական աջակցության համապատասխան և ռացիոնալ օգտագործումը:

1.7 Համագործակցություն այլ միջազգային կազմակերպությունների հետ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.7.1	Նախապատրաստվել և քայլեր ձեռնարկել Եվրոպական Միության հետ ավելի սերտ ինստիտուցիոնալ համատեղելիության ուղղությամբ՝ հետագա անդամակցության հեռանկարով
Գործող. 1	Իրականացնել Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողության ծրագիրը:
1.7.2	Քաջալերել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների գործողությունների փոխլրացումը, նվազեցնել և կանխել կրկնակումը:

Գլուխ 2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.1.	Հրամանատարական օղակի վերանայում
Գործող. 1	Որպես կառավարության ծրագրին աջակցություն, ըստ որի Ձինված ուժերը պետք է վերափոխվեն այնպես, որ էլ ավելի համապատասխանեն ժողովրդավարական հասարակարգին հատուկ արժեքներին, իրականացնել ՊՆ և ՁՈՒ ԳՇ ներկայիս հրամանատարական օղակի ու հրամանատարական- վերահսկողական ընթացակարգերի վերանայում և ապահովել առաջարկներ այդ բարեփոխումների համար պատասխանատու միջգերատեսչական հանձնաժողովի համար:
Գործող. 2	Հրամանատարական օղակի ու հրամանատարական- վերահսկողական ընթացակարգերի վերանայում արդյունքների հիման վրա փոփոխության ենթարկել պահանջվող օրենսդրությունը և իրագործել նոր ընթացակարգերը:

2.2.	Ազգային անվտանգության քաղաքականության և դրան վերաբերող փաստաթղթերի մշակում
Գործող. 1	Ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի վերանայում՝ համաձայն սպառնալիքների նորացված գնահատմանը:
2.3	Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը
Գործող. 1	Սպառնալիքների նորացված գնահատման հիման վրա իրականացնել Պաշտպանության ռազմավարական վերանայում, որով

	կասահմանվեն ՋՌԻ կառույցը, ենթակառույցները (բազաներ, օդանավակայաններ, կենտրոնակայաններ) խնդիրները և սարքավորումը՝ հաշվի առնելով ռազմավարական միջավայրը և հնարավոր ռեսուրսները: Պաշտպանության ռազմավարական վերանայումը պետք է իրականացվի Ֆինանսների նախարարության հետ սերտ համագործակցությամբ և ամբողջ կյանքի համար պահանջվող ֆինանսական ծախսերի (life cycle costing methodology) մեթոդաբանության կիրառմամբ՝ որպեսզի կայացրած որոշումները հիմնված լինեն ճշգրիտ կերպով հաշվարկված հուսալի ֆինանսական կանխատեսումների և տարբերակների վրա: Ազգային ժողովը և միջգերատեսչական հանձնաժողովը պետք է իրազեկվեն պաշտպանության վերանայման առաջընթացի մասին:
Գործող. 2	Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացմանը զուգընթաց ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով զինված ուժերի անձնակազմը կտեղեկացվի ծրագրված բարեփոխումների և կազմակերպության ներսում նրանց ազդեցության վերաբերյալ:
Գործող. 3	Քանի որ Պաշտպանության ռազմավարական վերանայումը կարող է առաջարկել անձնակազմի և տեխնիկայի թվաքանակի կրճատում, անհրաժեշտ է զարգացնել փորձագիտական գնահատումը՝ կրճատված անձնակազմի վերապատրաստման և քաղաքացիական կյանքի մեջ վերաինտեգրման, բազաների և ենթակառույցների փակման, զինամթերքի և զինտեխնիկայի ոչնչացման հետ կապված ծախսերի գնահատման նպատակով:
2.4	Պաշտպանական պլանավորում և բյուջետավորում
Գործող. 1	Գնահատել պլանավորման և բյուջետավորման համակարգը երկրի իրավիճակին առավելագույնս համապատասխանելու տեսանկյունից և ապահովել պլանավորման գործընթացում ընդգրկված բոլոր նախարարությունների և համապատասխան այլ կառավարական մարմինների գործունեության պատշաճ համակարգումը: Պլանավորման համակարգը պետք է նաև միտված լինի պլանավորման ավելի կայուն հիմունքների ներմուծմանը և պետք է հիմնվի հուսալի ֆինանսական պլանավորման՝ ներառյալ ամբողջ կյանքի համար պահանջվող ֆինանսական ծախսերի մեթոդաբանության վրա: Նոր համակարգը պետք է հաջորդ ֆինանսական տարվա համար ապահովի ժամանակին արված և կայուն բյուջետային կանխատեսում, ինչպես նաև վստահելի հաշվարկ հաջորդ երեքից հինգ տարիների համար:
Գործող. 2	Ավարտել ավելի թափանցիկ, կատարելագործված աուդիտային և հաշվապահական ընթացակարգերով ուղեկցվող պլանավորման և բյուջետավորման համակարգի ներդրումը, իրականացնել փորձաշրջան և ամբողջացնել նոր համակարգի ներդրումը:
Գործող. 3	Ստեղծել պաշտպանական պլանավորման բաժանմունք՝ երկարաժամկետ պլանավորման և սարքավորումների ձեռքբերման հիմնավորման համար անհրաժեշտ «Պահանջների հայտարարագրերի» մշակման նպատակով:
Գործող. 4	Մեծացնել հանրության աջակցությունը Պաշտպանության ռազմավարական վերանայման տարբերակներին՝ բարձրացնելով պաշտպանական բյուջեի հաստատման գործընթացի թափանցիկությունը:
2.5	Ձորահավաքային համակարգը և պահեստագործի վերապատրաստումը
Գործող. 1	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել և փոփոխել ներկայիս զորահավաքային համակարգը՝ դրա արդյունավետության բարձրացման և ծախսերի նվազեցման նպատակով:
Գործող. 2	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել պահեստագործային ուժերի թվաչափը և դասակարգումը, սահմանել յուրաքանչյուր կարգի համար անհրաժեշտ սպառազինության և ուսուցման ծախսերն ու

	ծառայությունները:
2.5	Ռազմական փոխգործունակություն

2.5.1	Մեկ խաղաղապահ բրիգադի կազմավորում օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները
Գործող. 1	Ստեղծել մեկ խաղաղապահ բրիգադ՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները: Բրիգադի մարտական ծառայությունների ապահովումը (հակատանկային, ականանետային, հետախուզային, հակաօդային պաշտպանության, զինվորական ինժեներների, հետախուզության, ռազմական ոստիկանության և Ռ-ԶԿ) և թիկունքային (թիկունքային՝ սնունդ, մատակարարումներ, պահպանում, վերանորոգում) և բժշկական ապահովումը պետք է հնարավորություն տա, որ բրիգադն ունակ լինի երկու տարվա ընթացքում ռոտացիաներով տեղաբաշխել և պահպանել մեկ գումարտակ:
Գործող. 2	Ներդնել մեխանիզմներ, որոնք ապահովում են ՆԱՏՕ-ի չափանիշների կիրառումը ՆԱՏՕ-ի ղեկավարած Գ-հիս գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումներում:
Գործող. 3	Ստորաբաժանումների կազմավորման և ուսուցման ընթացքում ձեռք բերված փորձն օգտագործել որպես կատալիզատոր՝ ուսուցման կատարելագործման և ՋՌԻ այլ ստորաբաժանումների աստիճանական վերափոխման ապահովման համար:
2.3.2.	Ջորավարժությունների և գործողությունների պլանավորում
Գործող. 1.	Ջորքերի գործողությունների նախապատրաստման և վերապատրաստման համար գործողությունների և գորավարժությունների պլանավորման մասնագետների վերապատրաստման նպատակով օժդանդակության ակնկալում:
Գործող. 2	ՆԱՏՕ-ի շտաբային տարրերում նշանակել շտաբային սպաներ՝ միջազգային կառույցներում աշխատանքային փորձով նրանց ապահովելու համար:
2.6	Անձնակազմի վերապատրաստում և կառավարում

2.6.1	Կրթական համակարգի վերանայում
Գործող. 1	Կրթական համակարգի վերանայման նպատակով մշակել Գործողությունների ծրագիր:
Գործող. 2	Մշակել ուսումնական և վերապատրաստման հայեցակարգ:
Գործող. 3	Շարունակել զարգացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հետազոտական և վերլուծական կարողությունները:
Գործող. 4	Մշակել ավագ սպայական անձնակազմի համար դասընթաց:
Գործող. 5	Կատարելագործել կրտսեր սպայական անձնակազմի ուսումնական ծրագրի բովանդակությունը:
Գործող. 6	Կատարելագործել սերժանտների ուսումնական ծրագրի բովանդակությունը:
Գործող. 7	Սահմանել երկրի ներսում և արտերկրում քաղաքացիական անձնակազմի համար ուսուցման հնարավորությունները: Մշակել ուսումնական դասընթացներ քաղաքացիական անձնակազմի համար առաջնահերթությունը տալով նրանց որոնք պետք է

	զբաղվեն պաշտպանական հարցերի և բյուջետային պլանավորմամբ և աշխատեն պաշտպանության նախարարության պաշտպանական քաղաքականության վարչություններում:
2.6.2	Ուսումնական ծրագիր
Գործող. 1	ԶՈՒ տարբեր զորատեսակների տարեկան ուսումնական ծրագրի համար մշակել նոր չափանիշ և ստեղծել գնահատման մի մեխանիզմ, որը կբացահայտի թե որքանով են իրականացվել սահմանված չափանիշները:
Գործող. 2	Մշակել ուսումնական ծրագրի ցամաքային ուժերի, ավիացիայի և ՀՕՊ զորքերի գումարտակային մակարդակի ստորաբաժանումների համար:
Գործող. 3	Երաշխավորել, որ Միջազգային մարդասիրական իրավունքին առնչվող հրահանգները ներառված են ռազմա-ուսումնական հաստատությունների ծրագրերում և որ ողջ անձնակազմը իրազեկված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին բողոքով դիմելու իրենց իրավունքի մասին:
2.6.3	Անձնակազմի կառավարման համակարգի բարեփոխումներ
Գործող. 1	Գործող համակարգի կատարելագործման նպատակով ակնկալել խորհրդատվություն որոշակի հաստիքներում պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ որակավորման և ուսուցման չափանիշների վերաբերյալ՝ արտերկրում ստանալիք ուսուցումը ներառյալ: Ապահովել յուրաքանչյուր հաստիքի աշխատանքային գործառույթների, յուրաքանչյուր հաստիքում ծառայության տևողության, նոր հաստիքի չնշանակվելու դեպքում նախքան գորագրումը կամ վերանշանակումը կոչումների կրման տևողության վերաբերյալ հստակ նկարագիրը:
Գործող. 2	Ստեղծել ստանդարտ ֆինանսական բավարարման (աշխատավարձերի) դասակարգում՝ ըստ հաստիքների (զինվորական և քաղաքացիական անձնակազմերի համար), ինչպես նաև սահմանել հավելավճարների հատկացման սանդղակ՝ հատուկ որակավորումների առկայության կամ հատուկ պարտականությունների իրականացման դեպքում, կրթական և որակավորման պահանջներ գործառույթների իրականացման համար, որոնք նպատակ պետք է ունենան երաշխավորելու, որ ռազմական որակավորումները ճանաչվում են քաղաքացիական կրթական համակարգում և գորագրման, ծառայության վայրի փոփոխության համար գործընթացներ և գորագրված անձնակազմի համար սոցիալական դրույթներ (ներառյալ կենսաթոշակը):
Գործող. 3	Կատարելագործել գոյություն ունեցող համակարգը անձնակազմի համապատասխան փորձն ու գիտելիքները մատնանշելու համար, որպեսզի ամենալավ որակավորում ունեցող անձնակազմը նշանակվի համապատասխան պաշտոնների:
Գործող. 4	Կատարելագործել սպայի, սերժանտների, զինվորների և քաղաքացիական անձնակազմի գնահատման արդար և թափանցիկ ներկայիս համակարգը նրա համար, որպեսզի հիմք ունենան նրանց ընտրություն կատարելու հաջորդ ավելի բարձր պաշտոնի զբաղեցման համար: Այդ համակարգը պետք է ապահովի անհատին թե ինչ է նրանից ակնկալվում և թե ինչ նա պետք է կատարի իր գիտելիքները կատարելագործելու նպատակով:
2.6.4	Լեզվի ուսուցում

Գործող. 1	Կատարելագործել լեզվի ուսուցման կարողությունները Ռ-ազմական Ակադեմիայում և Ավիացիոն ինստիտուտում:
Գործող. 2	Կատարելագործել լեզվի և ռազմական տերմինաբանության ուսուցումը խաղաղապահ ստորաբաժանումում:
Գործող. 3	Անձնակազմի համար լեզվի լրացուցիչ ուսուցման նպատակով շարունակել օգտագործել երկկողմ օժանդակությունը:
Գործող. 4	Կատարելագործել ուսուցիչների որակավորումը և հիմնել լեզվի ստուգման և ուսուցման կենտրոն: Ապահովել վերապատրաստված և փորձառու գնահատողների առկայությունը
Գործող. 5	Մշակել լեզվի մասնագիտացված դասընթացներ ավագ սպայական անձնակազմի, ներառյալ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության մեջ ներգրավված հրամանատարական պաշտոններ զբաղեցնող սպաների համար:
Գործող. 6	Ամրապնդել կառավարումը և որակի ապահովումը դասընթացները կատարելագործելու, լեզվի ուսուցման լաբորատորիաները և վերապատրաստման ու ստուգման համար նախատեսված չափանիշները պահպանելու համար՝ միաժամանակ շարունակելով բարելավել հրահանգիչների որակավորումը: Այս միջոցառումների համապար Է ապահովել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ:
2.7	Հրամանատարության, վերահսկողության և թիկունքային ապահովման երկարաժամկետ ծրագրեր
Գործող. 1	Օգտագործելով Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքները՝ մշակել հրամանատարության-վերահսկողության-կապի (ՀՎԿ) երկարաժամկետ պլան և ՀՎԿ համակարգերի կառուցվածք (ներառելով կապի, նավիգացիայի, իդենտիֆիկացիայի և ավտոմատացված տեղեկատվական համակարգերը, ինչպես նաև դրանց ֆունկցիոնալ ծառայությունները), ինչն անհրաժեշտ է Պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար: Այս խնդիրների իրականացմանն օժանդակելու նպատակով Հայաստանը կաշակցի ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության և վերահսկողության գործակալության (NC3A) ՆԱՏՕ-ի ցանցային կարողությունների իրագործման ու փոխգործունակության ենթակոմիտեի (NNEC & Interoperability Sub-group) միջոցառումներին, կմասնակցի ՆԱՏՕ-ի և Կոալիցիայի կապի ու տեղեկատվական համակարգերի փոխգործունակության տեստավորման միջոցառումներին և կձգտի փորձագիտական աջակցություն ստանալ ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության և վերահսկողության գործակալությունից (NC3A):
Գործող. 2	Օգտագործելով Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքները՝ մշակել թիկունքային (ներառյալ բժշկական) ապահովման երկարաժամկետ պլան, ինչն անհրաժեշտ է Պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար:
Գործող. 3	Աստիճանական զարգացմամբ իրականացնել անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում և արդիականացում՝ յուրաքանչյուր փուլում ցուցադրելով նոր կարողություն և փոխգործունակություն:
2.8	Ազգային ռազմա-արդյունաբերական համալիրը և դրա առնչությունը պաշտպանության հետ

Գործող. 1	Կատարել ներկայիս ռազմա-արդյունաբերական համալիրի գնահատումը պաշտպանության համար դրա օգտակարությունը և առնչությունը սահմանելու համար:
Գործող. 2	Տրամադրել առաջարկներ դրա հավանական վերակազմավորման կամ վերացման համար:

2.9	Սահմանային անվտանգություն
Գործող. 1	Ակնկալել օժանդակություն և խորհրդատվություն Գաշնակիցներից և Գործընկերներից իրականացնելու սահմանային անվտանգության կառույցում առկա ընթացակարգերի և պրակտիկայի վերանայում և անհրաժեշտ առաջնային սարքավորումների գնահատում և ապահովել առաջարկներ սահմանային անվտանգությունը բարելավելու համար:
Գործող. 2	Այդ հետազոտման արդյունքների հիման վրա որոշել սահմանային անվտանգության արդյունավետության բարձրացման համար փոփոխման ենթակա ընթացակարգերն ու պրակտիկան: Նույն հետազոտման հիման վրա որոշել առաջնային, այդ թվում ՋՈՋ կոմպոնենտների հայտնաբերման սարքավորումները, որոնք անհրաժեշտ է արդիականացնել կամ ձեռք բերել՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով:
Գործող. 3	Փոփոխել ընթացակարգերն ու պրակտիկան և կազմել առաջնային համարվող սարքավորումների արժեքի մոտավոր հաշվարկներ և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործում օժանդակության համար դիմել Դաշինքի անդամ կամ գործընկեր երկրներին, կամ օգտագործել ազգային միջոցները:

Գլուխ 3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակական տեղեկատվություն անվտանգության և պաշտպանության վերաբերյալ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.1.1.	Մշակել Ազգային տեղեկատվական ռազմավարություն Հայաստան-ՆԱՏՕ գործողության պլանի վերաբերյալ՝ ի աջակցություն պաշտպանական և անվտանգության բարեփոխումների
Գործող. 1	Իրականացնել տեղեկատվական արշավ: Միջգերատեսչական հանձնաժողովում ստեղծել հասարակական տեղեկատվության հատուկ հանձնախումբ:

	Կանոնավոր կերպով պատրաստել և հեռարձակել ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ ՆԱՏՕ-ի վերաբերյալ:
3.1.2	Ընդլայնել հանրային իրազեկությունը ՆԱՏՕ-ի վերաբերյալ
Գործող. 1	Շարունակել օժանդակությունը Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնին:
Գործող. 2	ՆԱՏՕ-ի գրքերի ստեղծման և բացում մարզերի համալսարաններում:
Գործող. 3	ՆԱՏՕ-ի հանրային դիվանագիտության վարչության հետ համատեղ կազմակերպել սեմինարներ, աշխատաժողովներ և համաժողովներ՝ հատուկ ընտրված լսարանի համար (տեղական իշխանություններ, համալսարաններ, լրագրողներ, հասարակական կազմակերպություններ): Յուրաքանչյուր տարի Հայաստանում կազմակերպել «ՆԱՏՕ-ի շաբաթ»:
Գործող. 4	Կազմակերպել հանրային միջոցառումներ /սեմինարներ, դասախոսություններ, հեռուստատեսային հաղորդումներ, գրքեր, հեռուստակամուրջներ/ նվիրված ՆԱՏՕ-ի հիմնադրման 60-ամյակին:

3.2 Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.2.1.	«Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի շրջանայնորում կազմակերպված միջոցառումների միջոցով արձագանքել անվտանգության կարևորագույն առաջնահերթություններին
Գործող. 1	Շարունակել աշխատանքները ազգային և տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության ոլորտում:
3.2.2	Արձագանքել հայ ազգային գիտական և տեխնոլոգիական առաջնահերթություններին՝ համագործակցության կոնկրետ միջոցառումների միջոցով

Գործող. 1	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով բիոահաբեկչության սպառնալիքի վրա:
Գործող. 2	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների փորձագիտության ընդլայնման նպատակով:
3.4.1	«Հայաստանի Հանրապետությունում ժամկետանց թունաքիմիկատների հաշվառում, մոնիտորինգ և վերլուծություն՝ դրանց էկոլոգիապես անվտանգ հեռացման նպատակով» ՆԱՏՕ-ի ԳԽԽ ծրագրի իրագործում
Գործող. 1	Հիմնել վերլուծական լաբորատորիա:
Գործող. 2	Իննանիմայի և Մասարիկի կրթական և գիտահետազոտական հաստատություններում հայ մասնագետների վերապատրաստում:

3.3 Քաղաքացիական ճգնաժամերի կառավարում և ճգնաժամային պատրաստակամություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.3.1	Բարելավել Հայաստանի ճգնաժամային կառավարման համընդհանուր կարողությունները և միջգեյտեսչական համադրումը
Գործող. 1	Մշակել արտակարգ իրավիճակների ազգային կռավարման հայեցակարգ և երաշխավորել համապատասխան օրենսդրական և վարչական շարունակություն:
Գործող. 2	Ստեղծել մշտական Իրավիճակային կենտրոն/ճգնաժամային կենտրոն բոլոր իրավասու գերատեսչությունների մասնակցությամբ, որը կառավարությն համար կծառայի որպես ճգնաժամերի արձագանքման միջոց:
Գործող. 3	Հիմնվելով ռիսկերի ճիշտ գնահատման վրա նորացնել և կատարելագործել ճառագայթային, քիմիական, կենսաբանական և միջուկային ճգնաժամերին, ինչպես նաև ահաբեկչական գործողություններին արձագանքելու միջգերատեսչական արձագանքման պլանները:
Գործող. 4	Կատարելագործել գեո-տեղեկատվական համակարգի կարողությունները:
Գործող. 5	Կատարելագործել աղետների բժշկության փորձագիտական հնարավորությունները և կարողությունները:
Գործող. 6	Բարելավել աղետների արձագանքման ուժերի մասնագիտական կարողությունները և անգլերեն լեզվի ուսուցումը՝ համապատասխան միջազգային չափանիշներին հասնելու նպատակով:

3.3.2.	Կատարելագործել համաճարակային պատրաստվածությունը և արձագանքման կարողությունները
Գործող. 1	Հգորացնել համաճարակային արձագանքման պլանավորման համակարգը՝ ներառյալ կատարելագործելով սառեցնող սարքավորումները և վերապատրաստելով առողջապահական հաստատությունների անձնկազմը:
Գործող .2	Հրատապ պատվաստումների համար բարելավել, հատկապես Առողջապահության նախարարության կարողությունները:

Գլուխ 4 . ՎԱՐՉԱԿԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

4.1 Վարչական խնդիրներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.1.1	Համադրման, փոխգործողության և աջակցող ծրագրերի համահունչ ղեկավարման միջոցով ապահովել ԱԳԳԾ արդյունավետ իրագործում
Գործող. 1	Համապատասխան մարմնի միջոցով ապահովել պատշաճ միջգերատեսչական համադրում:
Գործող. 2	Համապատասխան մակարդակներում ապահովել փոխգործակցություն ՆԱՏՕ-ի, ներառյալ ՆԱՏՕ-ի կապող օղակ հանդիսացող դեսպանության հետ և ապահովել պատշաճ աշխատանքային պայմաններ ՆԱՏՕ-ի փոխգործակցության սպայի համար:

4.2 Ռեսուրսներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.2.1.	Ապահովել ԱԳԳԾ աջակցման ծրագրերի և միջոցառումների համապատասխան ֆինանսավորումը
Գործող. 1	Սահմանել և հատկացնել համագործակցության այս ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական ու մարդկային ռեսուրսները:

--	--

4.3 «Պաշտպանողական անվտանգություն»

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.3.1.	Լիովին իրականացնել Հայաստանի կառավարության և ՆԱՏՕ-ի միջև ստորագրված անվտանգության վերաբերյալ համաձայնագիրը
Գործող. 1	Երաշխավորել «Անվտանգության մասին» համաձայնագրով պահանջվող ՆԱՏՕ-ի անվտանգության նվազագույն չափանիշները: Տեղեկատվության հոսքին և պահանջներին համապատասխան շարունակել ընդլայնել գոյություն ունեցող ռեգիստրային համակարգը: Շարունակել սահմանել այն պաշտոնները, որնց համար պահանջվում է ՆԱՏՕ/Գ-հԽ գաղտնիության թույլտվություն:
Գործող. 2	Ազգային անվտանգության ծառայության աշխատանքի կատարելագործման նպատակով ընդլայնել համագործակցությունն այլ երկրների համապատասխան ծառայությունների հետ: ՆԱՏՕ-ի գաղտնի տեղեկատվության հետ աշխատող հայ փորձագետների համար հիմնել ու իրականացնել անվտանգության վերաբերյալ կրթական և ուսումնական ծրագրեր՝ նպատակ ունենալով կատարելագործել ԱԱԾ ընդհանուր աշխատանքը:
Գործող. 3	Ստեղծել տեղեկատվության կրիպտոգրաֆիկ պաշտպանության էլեկտրոնային համակարգեր, ցանցեր և կապուղիներ: